բոն անուանված բոյսարմատը, որ կարմիր ներկ ունի։ Իւր ապրանքները միշտ յաջողակ վաճառելով՝ ստանում է ոսկի դրամ. բերել է տալիս Ռուսաստանից լեղակ, որդան կարմիր (ղերմեզ) և ամեն տեսակի ապրանք։ Խան Պողոս բէգի առեւտրական գործը հետզհետէ յաջողակ կերպով յառաջ է գնում Մուստաֆա խանի շնորհիւ. որովհետեւ նորա ժամանակ Ղիրվան (Աղսուն) երկիրը խաղաղութիւն էր վայելում. նա՝ Մուստաֆա խանը հայերին բաւական պաշտպանում էր պարսիկների և տաճիկների հալածանքից և բռնութիւնից։

Աղա Մահամմատ շահին Ղուշի քաղաքում սպանելուց յետոյ՝ ռուսաց զօրքը նուաճեց Ղիրվանի հարեւան քաղաքները՝ Ղուշի, Գանձակ, Նուխի, Ղամախի, Լանքարան, Բաքու, Ղուբայ և Դարբանդ։ Ղիրվանայ Մուստաֆայ խանը առանց ընդդիմանալու հպատակութիւն ցոյց տուեց ռուսաց. իշխան (կնեազ) Ցիցիանովի ձեռամբ եղաւ նա հարկատու խան։ Այդ ժամանակ ռուսաց մէկ մասնաւոր զօրաբաժին բանակեալ ունէր Ղիրվանայ Սաղիան գիւղի ս. Ստեփաննոս վանքի մօտ, որ մերձաւորապէս 22 վերստաչափ հեռաւորութիւն կունենայ Փիթ գաղից, և 18 վերստ Ղամախուց։

Սաղիան գիւղի յիշեալ ս. Ստեփաննոս նախավկայի վանքը այդ ժամանակ ծաղկած դրութեան մէջ լինելով՝ հարուստ վանք է եղել կամ առաջնորդարան վիճակին. նոյն վանքի վանահայրը Յովհան եպիսկոպոսը մի քաղաքագէտ և գործունեայ մարդ է եղել, որը Ղիրվանայ թեմի և միանգամայն Ատրպատականայ թեմի առաջնորդն է համարուել։ Մի դէպքի առիթով մինչեւ ռուսաց նուաճելը Ղիրվանին՝ Մուստաֆայ խանը հին Ղամախի քաղաքը Աղսուից մինչեւ Փիթգաղ տեղափոխելը՝ զայրանալով Յովհան եպիսկոպոսի վերայ՝ հրամայում է դանակոծ անել նորան. բայց յետոյ անձամբ տեսնելով Յովհան եպիսկոպոսին և ծանօթանալով միջոցաւ խան Պողոսի, շատ փոշմանում է իւր արարքի մասին, և այնուհետեւ սկսում է սիրել և յարգել նորան։ Երբեմնապէս Մուստաֆա խանը իւր շքախմբով (свита) հիւր է գնացել Յովհան եպիսկոպոսին, որ մեծ հիւրասիրութիւն ցոյց տալով՝ ճանապարհել է խանին և շքախմբ-